Ինչ վերաբերում է անուան պէտք է ասել Տիգրանուհի յատուկ անուն չէ, ինչպէս և անոյշ և դուխտ վերջաւորուած բառերը, այլ մէկի դուստր կամ քոյր է նշանակում, այնպէս որ գուցէ թէ Տիգրանուհու իսկական անունն է Մանուշակ, Նուբար-Նունուֆար[1], և կամ գուցէ նորան փոխարինել են նման պարագաներում համանուններ յետագայ դարերում։ Մանուշակ անուան մենք հանդիպում ենք և մի այլ հեքաթում, «Անդին Բիլբուլ ու տիկին Մանուշակ», որ նոյն տողում կոչւում է Կիւլլի փէրի[2]։

§ 4. Այժմ դառնանք մեր երեք նոր փոփոխակներին։

№ 16-ը նման է շատ բաներով և պատմուածքի ընթացքով № 17-ին. ունի հետևեալ նոր գործող անձերը. Հնդու Եամանար թագաւոր, Կլիճ-Բաթման և Քեամուսէ-Քեաշան օտարներ, և հայ Վարդան։ Առաջինը մենք չգիտենք ով է, երկրորդը յիշեցնում է մեզ Կլիճ (=սուր) մակդիրով միջնադարեան թուրք սուլթան Կլիճ-Արսլանի նման մինը Սասունի հարաւում, ինչպէս որ կայ Բաթմանայ Բիւղէն. Քեամուսէ Քեաշանը թուում է Շահնամէից անցած. իսկ Վարդանը՝ անշուշտ Մամիկոնեան ծանօթ համանուն քաջերից մինն է։

Գլխաւորն այն է, որ այս վէպով պարզւում է մեր հէքաթներում յաճախ գործածուած «Արևելից» և «Արևմտոց» թագաւոր անորոշ բառերը։ Չնայելով որ Մ. Խորենացին Հայոց աշխարհը «հանուրց հիւսիսականաց վեհագոյն» է կոչում, բայց և այնպէս մեր այս փոփոխակում «Արևելից թագաւոր» (№ 16, § 1, 101, 111) Հայոց թագաւորն է։ «Արևելից տուն» է կոչւում Մեծ Հայքը և ԺԲ դարու յիշատակարաններում[3] անշուշտ «ընդիկ հայկազանց աշխարհը» Կիլիկիայից տարբերելու համար։ Իսկ Արևմտոց կամ Արևպտոց թագաւորը որ յիշւում է և մի այլ փոփոխակում (№ 1, Ե, էջ 15) Բիւզանդիոնը[4] պէտք է հասկանալ։

Հետաքրքրական է և սորա մի իրաւագիտական տեղեկու-

---

1. Գերմանացի գիտնականներ Բելկ եւ Լեհման բաղմաթիւ փաստերով ապացուցեցին, որ ոչ թէ Համիդ-Գիարբեքիրն է մեր հին Տիգրանակերտը, այլ այժմեան Ֆարկինը (Նփրկերտ, Մարտիրոսաց քաղաք)։ Արդ Տայլորը Ֆարկինի տեղական հայերից լսել է, որ այդ քաղաքը շինել է Նուֆար [=Նուբար թէ Նունուֆա՞ր] Տիգրանի քոյրը (C, X. Lehmann-Haupt, Armenien Einst und Jetzt, էջ 406, 539. Berlin 1910):

2. Էմինեան Աղգագր. ժող. Դ. § 55, էջ (217—225) 217. 220. 221. Մոսկուա-Վաղարշապատ 1902։

3. Սամ. Անեցի. Յաւելուածներ. Դ, էջ 215. Ե. էջ 240. Վաղարշապատ. 1893։

4. Մանանայ էջ 171—214, թիւ 4—6 հեքաթները Քաջանց տան զրոյցի հեաքեր ունին. Երազատեան էլ կարծես Արշակ Բ. է։